ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

<<Արտավազդ>> ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Արարատի մարզի Թթուջրի տրավերտինների հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ /1-ին լսում/

ք.Վեդի 21.11.2023թ.

2023թ. նոյեմբերի 17-ին ժամը 12:00-ին ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի վարչական շենքում տեղի ունեցավ <<Արտավազդ>> ՍՊ ընկերության /այսուհետ նաև՝ Ընկերություն/ կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի Թթուջրի տրավերտինների հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումներ /1-ին լսում/:

Հանրային քննարկմանը մասնակցում էին ՀՀ Արարատի մարզի Վեդու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Հ. Ստեփանյանը, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ՝ Շ. Բաքոյանը, համայնքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ներկայացուցիչներ, Ընկերության տնօրեն՝ Ն. Բարսեղյանը և Ընկերության բնապահպանական խորհրդատու՝ Զ. Զուտնաչյանը:

Հանրային քննարկումը /լսումը/ բացեց և խոսքով հանդես եկավ Վեդու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Հրաչյա Ստեփանյանը և հայտնեց, որ ՀՀ կառավարության 19.11.2014թ. թիվ 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով (այսուհետ նաև՝ Կարգ) կազմակերպվել և իրականացվում է Ընկերության կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի Թթուջրի տրավերտինների հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ թվով 1-ին հանրային քննարկումը /1-ին լսում/:

Ղեկավարվելով Կարգի դրույթներով, Վեդի համայնքի ղեկավարի կողմից հանրային քննարկումների պատասխանատու է նշանակվել Վեդու համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ՝ Շ. Բաքոյանը և խոսքը փոխանցվեց վերջինիս:

Վեդու համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Շ. Բաքոյանը, նշեց, որ քննարկվող հարցի շուրջ 1-ին հանրային քննարկումն է /1-ին լսում/, վերջինս առաջարկեց ձեռնարկողին հանդես գալ համապատասխան զեկույցով, որից հետո կիրականացվեն քննարկումները:

Ելույթ ունեցավ Ընկերության բնապահպանական խորհրդատու՝ Զարուհի Զուտնաչյանը, վերջինս ներկայացրեց ՇՄԱԳ հաշվետվությանը վերաբերող մի շարք հարցեր, որից հետո անցան քննարկման փուլին:

Վեդու համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Շ. Բաքոյանը հարցեր ուղղեց Ընկերության ներկայացուցիչներին՝

1. Հանքավայրի տարածքը 25.0 հա. է թե՞ ոչ,

2. Հանքավայրի տարածքը արոտավայր է, թե՞ ոչ.
3. Արոտավայրի, հողատեսքը ո՞ր կարգի է,
4. Քանի տարով է վարձակալության պայմանագիրը կնքված,
5. Կա արդյոք ենթավարձակալության պայմանագիր, թե՞ ոչ,
6. Վարձակալության պայմանագրով հողի տարեկան վարձավճարը սահմանված է 15,000 ՀՀ դրամ, արդյո՞ք քիչ չէ,
7. Դաշտաքարի ածխաթթվային ջրի հանքավայրից որքան հեռավորության վրա է գտնվում նախատեսվելիք հանքավայրը,
8. Հանքավայրի հումքը հանքավայրից տեղափոխվելու է, թ՞ե ոչ և ինչ ճանապարհներով,
9. Կանաչապատման Ձեր տեսլականը՝ կլինի հանքավայրին փոշեպաշտպան կանաչ գոտի,
10. Դաշտաքար բնակավայրից ի՞նչ հեռավորության վրա է գտնվում նախատեսվելիք հանքավայրը,
11. Հաքավայրում հումքը ինչ եղանակով է արդյունահանվելու

Հարցերին պատասխանեց Ընկերության բնապահպանական խորհրդատու Զարուհի Զուտնաչյանը՝ հայտնելով, որ ընկերության կողմից նախատեսվում է ստեղծել նոր՝ 10 և ավելին աշխատատեղ, ընդգրկելով ազդակիր Վեղի համայնքի բնակիչներին:

Հաջորդիվ հայտնեց, որ ըստ ՇՄԱԳ հաշվետվության՝ քննարկվող /25.0հա./ հողերը գյուղատնտեսության վարման համար պիտանի չեն: Աշխատանքներն իրականացվելու են լեռնատեխնիկական միջոցներով /փխրեցում/, պայթեցման աշխատանքներ չեն լինելու:

Նշեց, որ հանքավայրը գտնվում է Արարատի մարզի Վեղի համայնքի Դաշտաքար բնակավայրում, և նշեց վերջինիս հեռավորությունը հանքավայրից՝ 1.2 կմ.: Հանքավայրը գտնվում է բարենպաստ ճանապարհատրանսպորտային պայմաններում: Հաջորդիվ հայտնեց, որ ՇՄԱԳ հաշվետվությունում հստակ ներկայացված են շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների մանրամասն նկարագրերը՝ հողի, օդի, ջրի և այլնի վերաբերյալ: Ներկայացված է հանքավայրի տեղադիրքը էլեկտրոնային /Google (Գուգլ)/ քարտեզի վրա: Հաջորդիվ մանրամասն ներկայացրեց ՇՄԱԳ հաշվետվության բովանդակությունը:

Այնուհետև հարց ուղղեց համայնքապետարանի աշխատակազմի Իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ՝ Ասյա Մաթևոսյանը, վերջինս հարցադրելով Ընկերության ներկայացուցչին, թե արդյո՞ք կարգավորվելու է բեռնատար մեքենաների գերբեռնավորվածությունը, որի հետևանքով ճանապարհները դեֆորմացվում են: Վերջինիս կողմից պատասխանվեց, որ կարգավորելու և վերահսկելու են բեռնատար մեքենաների գերբեռնվածությունը:

Հաջորդիվ, համայնքապետարանի աշխատակազմի Կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և առողջապահության բաժնի գլխավոր մասնագետ՝ Լուսինե Գասպարյանը հարցը ուղղեց Ընկերության ներկայացուցչին, թե արդյոք ազդակիր Դաշտաքար բնակավայրում գտնվող դպրոցում սոցիալ-տնտեսական ներդրում լինելու է, թե ոչ, եթե այո, ապա ինչ չափով:

Ընկերության ներկայացուցիչը հարցին պատասխանեց, որ կնքվելիք պայմանագրում լինելու են սոցիալ-տնտեսական ներդրում՝ համաձայն համայնքի կողմից ներկայացված առաջարկության:

Հաջորդիվ համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ՝ Սիմոն Կարապետյանը հարցեր ուղղեց Ընկերության ներկայացուցչին՝

1. Ճանապարհներին ծանր տեխնիկայի շարժից առաջացած փոշեզանգվածի դեմ ինչպես են պայքարելու, արդյոք լինելու է ճանապարհաեզրերին փոշեպաշտպան կանաչ գոտի, ինչպես նաև ջրցան մեքենա,

2. Ուսումնասիրվել կամ ուսումնասիրվելու է վարձակալվող տարածքի կենսաբազմազանությունը:

Ընկերության ներկայացուցիչը պատասխանեց, որ լինելու են և՛ փոշեպաշտպան կանաչ գոտի և՛ ջրցան մեքենա:

Հաջորդիվ, Ընկերության ներկայացուցչին հարց ուղղեց համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Շ. Բաքոյանը, ունեն արդյո՞ք նախատեսված ջրի աղբյուրներ, որտեղից են օգտվելու: Վերջինս պատասխանեց, որ օգտագործվող ջուրը տեղեփոխելու են մեքենաներով:

Նախագահողը հարցրեց, թե արդյո՞ք ազդակիր Վեղի համայնքի բնակիչների կողմից կան հարցեր, թե՞ ոչ: Հաշվի առնելով լսարանի դիրքորոշումը՝ հայտարարեց լսման ավարտ:

Ամփոփելով հանրային քննարկման արդյունքները, ազդակիր Վեղի համայնքի ներկայացուցիչները հավանություն են տալիս «Արտավազդ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Արարատի մարզի Թթուջրի տրավերտինների հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին, հաշվի առնելով համայնքապետարանի հետևյալ առաջարկությունները.

1. Սոցիալական ներդրումների չափը հստակեցնելու դեպքում հաշվի առնել, այն որ Վեղի համայանքը ունի 18 գյուղական և 1 քաղաքային բնակավայր:
2. Կանաչապատման բնագավառում իրականացնել փոշեպաշտպան միաշերտ ծառատունկ:
3. Սահմանափակել և վերահսկել բեռնատար մեքենաների գերբեռնվածությունը՝ ըստ տեխնիկական վկայականի:

Կից ներկայացվում է մասնակիցների ցանկը՝ 1 թերթ և հանրային քննարկումների էլեկտրոնային կրիչը:

Քննարկումների պատասխանատու՝
ՀՀ Արարատի մարզի
Վեղի համայնքի ղեկավար՝ / / Գ. Սարգսյան
Ձեռնարկող՝ «Արտավազդ»
ՍՊԸ-ի տնօրեն՝ / / Ա. Բարսեղյան
Պատասխանատու՝ / / Շ. Բաքոյան
Արձանագրող՝ / / Ս. Կարապետյան

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

«Արտավազդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ ՀՀ Արարատի մարզի Թթուջրի տրավերտինների հանքավայրի օգտակար հանածոյի հանքարդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի վարչական շենքում 17.11.2023թ. տեղի ունեցած հանրային քննարկումների /1-ին փուլ/

ք.Վեդի

17.11.2023

h/h	Անուն, Ազգանուն	Զբաղեցրած պաշտոնը	Ստորագրություն
1.	[illegible]	[illegible]	[illegible]
2.	[illegible]	[illegible]	[illegible]
3.	[illegible]	[illegible]	[illegible]
4.	[illegible]	[illegible]	[illegible]
5.	[illegible]	[illegible]	[illegible]
6.	[illegible]	[illegible]	[illegible]
7.	[illegible]	[illegible]	[illegible]
8.	[illegible]	[illegible]	[illegible]
9.	[illegible]	[illegible]	[illegible]
10.	[illegible]	[illegible]	[illegible]
11.	[illegible]	[illegible]	[illegible]
12.	[illegible]	[illegible]	[illegible]
13.	[illegible]	[illegible]	[illegible]
14.	[illegible]	[illegible]	[illegible]
15.	[illegible]	[illegible]	[illegible]
16.	[illegible]	[illegible]	[illegible]
17.			
18.			
19.			
20.			
21.			